


ԲԱՆԲԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍՈՒՐԱՆԻ



ВЕСТНИК

АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ЭКОНОМИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА

MESSENGER

OF ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS

2021 [4]
ԵՐԵՎԱՆ



ՄԻԶԱԶԳԱՅԻՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՆՈՒՇ ԱՆԱՆՅԱՆ

ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների
ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

ԵՄ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ժամանակակից տնտեսական զարգացումների պայմաններում գրեթե ոչ մի երկիր չէր չի մնում ճգնաժամային երևույթներից, որոնք ժամանակ առ ժամանակ առաջանում են տարբեր երկրներում՝ ունենալով իրենց յուրահատուկ խորքային պատճառները: Տնտեսական հարաբերությունների զարգացման պատմությունը վկայում է, որ ճգնաժամերը սոցիալ-տնտեսական համակարգերի զարգացման գործընթացի անբաժան մասն են: Տնտեսական աճի և անկման պարբերաբար կրկնվող իրավիճակներն առաջանում են ցանկացած տնտեսական սոցիալ-տնտեսական համակարգերում՝ անկախ դրանց առանձնահատկություններից ու կառավարման բնույթից:

COVID-19 ճգնաժամը սուր ազդեցություն ունեցավ ԵՄ անդամ 27 երկրի տնտեսության վրա՝ առաջ բերելով աննախադեպ ցնցումներ Եվրոպայում և ամբողջ աշխարհում: Քանի որ համաշխարհային մակարդակով համավարակը դեռ ընթանում է, և դրա երկրորդ (հավանական է՝ նույնիսկ երրորդ) ալիքը դեռ պահում է Եվրոպան ու աշխարհն իր ճիրաններում, դեռ վաղ է գնահատել այս ճգնաժամի ամբողջական ազդեցությունը: Այդուհանդերձ, առաջնային հետևանքներն արդեն իսկ զգացնել են տալիս:

Կորոնավիրուսի համավարակը հանգեցրել է վերջին մի քանի տասնամյակների ընթացքում Եվրոպայի տնտեսության ամենաուժեղ փլուզմանը, թեև 2021 թվականին արդեն իսկ նշմարելի են վերականգնման միտումները:

Հիմնաբառեր. ԵՄ տնտեսություն, ճգնաժամ, անկում, կորոնավիրուս, համավարակ

JEL: F00, G01

DOI: 10.52174/1829-0280_2021_4_171

Ներածություն: Կորոնավիրուսի համավարակը մի քանի տասնամյակների ընթացքում հանգեցրել է Եվրոպայի տնտեսության ամենաուժեղ փլուզմանը: Միայն Եվրոգոտու 19 երկրում համախառն ՀՆԱ-ն առաջին եռամսյակում տարեկան կտրվածքով կրճատվել է 3,8 տոկոսով: Եվրամիության անդամ 27 երկրում տնտեսությունը տարեկան կտրվածքով կրճատվել է 3,5 տոկոսով:

Եվրոպայում տնտեսության փլուզումը մեծապես պայմանավորված էր կորոնավիրուսի պատճառով 2020 թվականի մարտից ԵՄ երկրներում խիստ սահմանափակումների կիրառմամբ: Արդյունքում՝ կաթվածահար եղավ բնականոն գործունեությունը տնտեսության մի շարք հատվածներում, փակվեցին գործարանները, խանութներն անորոշ ժամանակով դադարեցրին իրենց գործունեությունը, բնակչության մի ստվար հատված մատնվեց հարկադիր պարապուրդի:

Թեման արդիական է այնքանով, որ կորոնավիրուսը մինչև օրս սպառնալիք է ԵՄ, ինչպես նաև համաշխարհային տնտեսության համար:

Հոդվածի նպատակն է բացահայտել և վերլուծել ԵՄ տնտեսության ցուցանիշները կորոնավիրուսային համավարակից առաջ և հետո:

Գրականության ակնարկ: Աշխարհում արագորեն տարածվող կորոնավիրուսը դարձել է համաշխարհային տնտեսության աճի դանդաղեցման կամ նույնիսկ անկման պատճառ: Նոր տիպի կորոնավիրուսի համավարակի տարածմանն առաջինն արձագանքեցին տնտեսական ցուցիչները. բորսայական ինդեքսներ, հումքային ակտիվների գներ, փոխարժեքներ և այլն: Սա առողջապահական ճգնաժամ է, որը կաթվածահար է անում տնտեսական համակարգը, ժամանակավորապես կտրում տնտեսական «թելերը»¹: Ավելին, համամարդկային մարտահրավեր դարձած կորոնավիրուսը սպառնալիք է դարձել ոչ միայն առողջության և կյանքի, այլև տնտեսական աճի, ֆինանսական համակարգի կայունության և, նույնիսկ, տասնամյակներով գործող Եվրամիության միասնականության պահպանման համար²:

Բավականին ուսումնասիրություններ կան կորոնավիրուսային համավարակի պայմաններում ԵՄ տնտեսության ճգնաժամի մասին, որոնցից մի քանիսը ցույց են տվել ճգնաժամի ազդեցությունը ԵՄ տարբեր երկրների վրա:

ՄԱԿ-ի առևտրի և զարգացման համաժողովի անցկացրած հետազոտության համաձայն՝ 2020 թվականին համաշխարհային տնտեսությունը կրճատվել է 3,5 տոկոսով, ինչն ավելի քան երկուսուկես անգամ ավելի է, քան 2009 թվականի համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ժամանակ: 2021 թվականի համար կանխատեսվող 4,5 տոկոս չափավոր վերականգնումը հազիվ թե փոխհատուցի նախորդ տարվա վնասները³:

¹ Տե՛ս **Կարապետյան Ն.**, Ինչպե՞ս հակազդել կորոնավիրուսով պայմանավորված տնտեսական շոկին, մարտ, 2020, https://asue.am/amberd/publications/analytics/how-to-deal-with-the-economic-shock-caused-by-coronavirus-1?fbclid=IwAR30_xWeueO1TMkIiaHTdo4qEgYdi-xSys39er-Ahf22WKoysq0lpt33xM

² Տե՛ս **Թադևոսյան Ռ.**, Կորոնավիրուսը խարխլել է Եվրամիության միասնականությունը // «Ամբերդ» տեղեկագիր, 2020/1(2), Եր., «Տնտեսագետ» հրատ., էջ 30-34, <https://asue.am/upload/files/amberd/Amberd%202020.1.pdf>

³ Տե՛ս ՕՈՒ, *Мировая экономика после пандемии: ООН призывает к глобальной консолидации*, 25 января 2021, <https://news.un.org/ru/story/2021/01/1395082>

Եվրոյի գոտին, համաշխարհային տնտեսության համեմատությամբ, 2020 թվականին ավելի մեծ հարված է կրել և 2021 թվականին ավելի դանդաղ է վերականգնվում: Ակնկալվում է, որ իրական ՀՆԱ-ն ինչպես ԵՄ-ում, այնպես էլ Եվրոյի գոտում մինչճգնաժամային մակարդակին կհասնի մինչև 2022 թվականի կեսերը ⁴:

COVID-19 համավարակի պատճառով Եվրոպական միությունը հայտնվել է վերջին ժամանակաշրջանի իր պատմության ամենածանր ռեցեսիայի մեջ. սրվել են անդամների միջև առկա անհավասարակշռություններն ու տարբերությունները: Առողջապահական արտակարգ դրությունը հատկապես ծանր հարված է հասցրել հարավային ծայրամասային տարածաշրջանին (ներառյալ՝ Հունաստանը, Իտալիան, Պորտուգալիան և Իսպանիան)՝ բարդացնելով պայքարը լճացած աճի, պարտքի բարձր մակարդակի և մրցունակության թերությունների դեմ⁵: Չնայած 2021 թվականի համար որոշակի վերականգնում էր կանխատեսվում, համաճարակի սոցիալական, քաղաքական և տնտեսական հետևանքները, անկասկած, երկարատև կլինեն:

Հետազոտության մեթոդաբանություն: Հետազոտության համար որպես տեսական և մեթոդաբանական հիմք են ծառայել «Եվրոպական միության տնտեսական ճգնաժամը կորոնավիրուսի համավարակից հետո» թեմայի վերաբերյալ հայրենական և արտասահմանյան հեղինակների ուսումնասիրությունները, միջազգային մասնագիտացված տարբեր կառույցների (Առևտրի համաշխարհային կազմակերպություն, Համաշխարհային բանկ, ԵՄ վիճակագրական համակարգ (Eurostat) և այլն) և Statista տեղեկատվական-վիճակագրական հարթակի կողմից հրապարակված պաշտոնական վիճակագրական տվյալներն ու վերլուծական նյութերը, ինչպես նաև արտասահմանյան հետազոտական կենտրոնների կողմից կատարված հետազոտություններն ու վերլուծությունները:

Վերլուծությունը կատարվել է մի քանի ուղղություններով՝ վեր հանելով ԵՄ-ի տնտեսության զարգացման միտումները մինչև համավարակը և համավարակից հետո: COVID-19 համավարակին նախորդած ժամանակահատվածում ԵՄ կատարողականը բնութագրելու համար վերլուծության են ենթարկվել հիմնական արտադրական-արդյունաբերական թողարկման ցուցանիշները, ինչպես նաև մի խումբ մակրոտնտեսական ցուցանիշներ: ԵՄ տնտեսության վրա համավարակի և դրան հետևած տնտեսական սահմանափակումների ազդեցությունը գնահատելու նպատակով դիտարկվել և վերլուծվել են հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2020 թվականի 2-րդ եռամսյակից մինչև 2021 թվականի 2-րդ եռամսյակն ընդգրկող ժամանակահատվածում:

Հետազոտությունն առավել ամբողջական դարձնելու նպատակով կիրառվել են դիտարկման, համեմատության, վիճակագրական վերլուծության,

⁴ St'u De Vet J.M et al., Impacts of the COVID19 pandemic on EU industries, Publication for the committee on Industry, Research and Energy, Policy Department for Economic, Scientific and Quality of Life Policies, European Parliament, Luxembourg, 2021, էջ 8:

⁵ St'u IISS, The European Union in the COVID-19 storm: economic, political and stability challenges, 19 February 2021, էջ 1, <https://www.iiss.org/blogs/research-paper/2021/02/eu-covid-19-economic-political-stability-challenges>

ընդհանրացման, գրաֆիկական և կանխատեսման մեթոդները:

Համեմատական վերլուծությամբ դիտարկվել են մինչ կորոնավիրուսը-կորոնավիրուսից հետո ԵՄ տնտեսական ցուցանիշները՝ երկրների վրա համավարակի ազդեցությունն ավելի հստակ պատկերացնելու համար: Ցուցանիշներն օգտագործվել են հիմնականում ԵՄ կամ Եվրոյի գոտու համար ընդհանրացված տեսքով՝ միաժամանակ համեմատականներ անցկացնելով առանձին անդամ երկրների համար:

Ներկայացված վիճակագրական տվյալների վերլուծությունն ու ընդհանրացումն առավել ամբողջական են դարձնում համավարակի հետևանքների պատկերը, իսկ աղյուսակային և գրաֆիկական վերլուծությունը հնարավորություն է տալիս համեմատելու արդյունքները մի քանի տարվա կտրվածքով՝ բացահայտելով առկա խնդիրներն ու հնարավորությունները:

Վերլուծություն: Տնտեսության վրա կորոնավիրուսի ազդեցությունը որոշ չափով տարբերվում է վերջին տասնամյակների այլ համաճարակային հիվանդությունների ազդեցությունից: Ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները, համաշխարհային պահանջարկը դեռևս մնում է կայուն, ինչը նշանակում է, որ հիմնական սպառնալիքը համաշխարհային առաջարկն է: Ի տարբերություն տնտեսական այլ անկումների՝ ներկայիս ճգնաժամի պայմաններում որոշ արտադրանքների առաջարկի անկումը պայմանավորված չէ պահանջարկով. դա հիվանդության տարածումը զսպելու համար ձեռնարկված միջոցառումների անխուսափելի հետևանք է: Հետևաբար՝ տնտեսական քաղաքականության նպատակը համախառն պահանջարկի խթանումը չէ, համեմայնդեպս՝ ոչ սկզբնական փուլում: Այսինքն՝ կորոնավիրուսը, առնվազն մասամբ, բերում է առաջարկի ցնցումների՝ «փակելով» գործարանները և ստիպելով աշխատողներին մնալ տանը: Խնդիրը թերևս այն է, որ դժվար է առաջարկի ցնցումների դեմ պայքարել տարածված մեթոդներով (դրամավարակային քաղաքականության ընդլայնում և ֆինանսական խթանում), քանի որ այս բոլոր միջոցները խթանում են ոչ միայն առաջարկը, այլև պահանջարկը: Այս իրավիճակին գումարվում են նաև աշխարհում տոկոսադրույքների պատմականորեն ցածր և պարտքի բարձր մակարդակները, ինչը սահմանափակում է երկրների՝ մանկրելու հնարավորությունը:

Չնայած վերջին տասնամյակում համաշխարհային ՀՆԱ-ում Եվրամիության մասնաբաժնի շարունակական նվազմանը, համաշխարհային տնտեսության մեջ դրա համախառն ներդրումը նախկինի պես զգալի է (2019 թվականին ԵՄ մասնաբաժինը համաշխարհային ՀՆԱ-ում կազմել է 15,39%, 2020 թվականին՝ 14,95%, հաջորդող տարիների համար կանխատեսվում է ԵՄ մասնաբաժնի կայուն նվազում)⁶: 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ ԵՄ տարածքում ապրել է ավելի քան 513,5 մլն մարդ: ԵՄ-ին բնորոշ է զարգացման մակարդակների զգալի տարբերությունը պետությունների երկու խմբի միջև, այն է՝ «ԵՄ-15» (ԵՄ՝ ավելի բարձր մակարդակ ունեցող «հին» անդամներ) և «ԵՄ-13» (այսինքն՝ այն 13 պետությունները, որոնք 2004 թվա-

⁶ St'u Statista, European Union: share in global gross domestic product based on purchasing-power-parity from 2016 to 2026 / <https://www.statista.com/statistics/253512/share-of-the-eu-in-the-inflation-adjusted-global-gross-domestic-product/>

կանից հետո անդամակցել են միությանը)⁷: Համաշխարհային տնտեսության զարգացման դանդաղումը կարող է արգելակել միության «նոր» անդամների տնտեսական աճը, դանդաղեցնել ԵՄ երկրների տնտեսական զարգացման կոնվերգենցիան:

2016–2018 թվականների ընթացքում ԵՄ համախառն թողարկումը տարեկան, միջին հաշվով, 2,3 տոկոսով աճել է: ԱՄՀ գնահատումների համաձայն՝ 2019 թվականին ԵՄ տնտեսության աճի տեմպերը նվազել են մինչև 1,5 տոկոս: Համախառն թողարկման նման դինամիկան պայմանավորված է համաշխարհային տնտեսության բացասական իրադրությամբ, համաշխարհային առևտրի աճի տեմպերի նվազմամբ, առանձին երկրների միջև սակագնային հակամարտություններով և աշխարհաքաղաքական ռիսկերի հետ կապված անորոշությամբ, մասնավորապես՝ ԵՄ-ից Մեծ Բրիտանիայի դուրս գալով:

2019 թվականին տնտեսության աճի տեմպերի դանդաղումը բնորոշ էր ոչ բոլոր երկրներին: ՀՆԱ աճի համեմատաբար բարձր տեմպեր են արձանագրվել Մալթայում (5.7%), Կիպրոսում (5.3%), Իռլանդիայում (4.9%), Լեհաստանում (4.7%), Լիտվայում (4.6%), Հունգարիայում (4.6%), այն դեպքում, երբ ԵՄ 28 երկրների միջինացված ՀՆԱ-ն 2019 թ. կազմել ընդամենը 1.8%⁸:

ՀՆԱ վերլուծությունը ցույց է տվել, որ 2014–2018 թվականներին Եվրոպական միությունում համախառն ներքին արդյունքի աճը հիմնականում իրականացվել է հիմնական կապիտալում ներդրումների և տնային տնտեսությունների սպառման հաշվին: Զուտ արտահանումը բացասական ներդրում է ունեցել 2015–2016 թվականներին ՀՆԱ աճի մեջ, դրական՝ 2017–2018 թվականներին: Եվրոպական հանձնաժողովի՝ դեռևս նախահամավարակային ճգնաժամից առաջ արված գնահատականներով կանխատեսվել է, որ զուտ արտահանումը կդանդաղեցնի ԵՄ ՀՆԱ աճի տեմպերը 2019–2021 թվականներին⁹:

Անձնական սպառման աճի կայուն տեմպերի պահպանումը 2018–2019 թվականներին մեծապես պայմանավորված էր աշխատավարձի աճով, տոկոսադրույքների ցածր արժեքներով և գործազրկության՝ մինչճգնաժամային մակարդակից ցածր մակարդակի պահպանմամբ: Եվրոստատի տվյալների համաձայն՝ ԵՄ-ում գործազրկության միջին մակարդակը 2019 թվականի արդյունքներով կազմել է 6,4 տոկոս՝ 2016 թվականի 8,6 տոկոսի փոխարեն: Սակայն նման միտումը բնորոշ էր ոչ բոլոր երկրներին: Օրինակ՝ Իսպանիայում 2019 թվականին գործազրկության մակարդակը կազմել է 14,1%, ինչը բարձր է մինչճգնաժամային ցուցանիշների համեմատությամբ (8,2%՝ 2007 թ.), Դանիայում՝ 5.0% (3.8%՝ 2007 թ.), Կիպրոսում՝ 7,5% (3.9%՝ 2007 թ.):

Եվրամիության երկրների տնտեսությունների աճի զուսպ տեմպերը նույնպես ազդել են ՀՆԱ մեկ շնչի հաշվով դինամիկայի վրա. ԱՄՆ-ի դրլարի

⁷ St'u Неравномерность развития стран Евросоюза в 2000-х годах // Бюллетень о текущих тенденциях мировой экономики, выпуск № 26, ноябрь 2017, // URL, <https://ac.gov.ru/archive/files/publication/a/15555.pdf>.

⁸ St'u Eurostat, Real GDP growth rate – volume, TEC00115, 22/10/2021 / URL, <https://ec.europa.eu/eurostat/databrowser/view/tec00115/default/table?lang=en>

⁹ St'u Eurostat // URL: https://appsso.eurostat.ec.europa.eu/nui/show.do?dataset=une_rt_a&lang=en

աճի տեմպերի դանդաղումը ԵՄ-15 խմբի երկրներում փոքր-ինչ ավելի ընդգծված էր, քան ԵՄ-13 խմբի երկրներում: 2019 թվականին ԵՄ երկրներում մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ աճի միջին տեմպերը կազմել են համապատասխանաբար՝ 3,0 և 3,4 տոկոս: ԵՄ-15-ում 2019 թվականին միջին ՀՆԱ-ն հասել է 53,6 հազ. ԱՄՆ դոլարի:

ԵՄ տնտեսությունների աճի տեմպերի դանդաղումն ազդել է պետական բյուջեի պակասուրդի հետագա ավելացման վրա (2019 թվականին ՀՆԱ -0,9 տոկոսը): ԱՄՀ տվյալներով՝ 2016–2018 թվականներին ընթացիկ գործառնությունների հաշվեմանացորդը Եվրոպական միությունում մնացել է դրական, 2019 թվականին միտումը պահպանվել է (ՀՆԱ +2,0 տոկոսը): Եվրոստատի սեզոնային ճշգրտված վիճակագրական տվյալների համաձայն՝ ընթացիկ գործառնությունների հաշիվը 2019 թվականի 9 ամսվա արդյունքներով կազմել է 156,6 մլրդ եվրո: Դա պայմանավորված էր Գերմանիայում (+7,0%), Իռլանդիայում (+10,8%), Լյուքսեմբուրգում (+4,5%), Մալթայում (+7,6%) և Նիդեռլանդներում ընթացիկ գործառնությունների հաշվի զգալի ավելցուկով (+9,8%)¹⁰:

2019 թվականին միջին տարեկան գնաճի աճի տեմպը Եվրոպական միությունում շարունակել է նվազել (մինչև 1,5%), ինչը պայմանավորված է եղել էներգակիրների գների նվազմամբ: Ընդ որում, գնաճի մակարդակները տարբերվում են ԵՄ-15 և ԵՄ-13 խմբերի միջև: Օրինակ՝ 2019 թվականի արդյունքներով Գերմանիայում գնաճը կազմել է 1,5%, Ֆրանսիայում՝ 1,2%, Բելգիայում՝ 1,5%, Դանիայում՝ 1,3%, Իսպանիայում և Պորտուգալիայում համապատասխանաբար՝ 0,7% և 0,9%: ԵՄ-13 խմբի երկրներում, ընդհակառակը՝ գների աճի տեմպերը զգալիորեն ավելի բարձր են եղել: Չեխիայում 2019 թվականի արդյունքներով գնաճը կազմել է 2,6%, Հունգարիայում՝ 3,4%, Ռումինիայում՝ 4,2%, Սլովակիայում՝ 2,6%:

Եվրոստատի տվյալներով՝ 2016–2017 թվականներին արդյունաբերական արտադրությունը ԵՄ-ում կայուն աճել է. 2016 թվականին աճի տեմպը կազմել է 1,8%, 2017 թվականին՝ 3,1%: Սկսած 2018 թվականից՝ արդյունաբերական արտադրության աճի տեմպը դանդաղել է. 2018 թվականին նվազել է մինչև 1,2%-ով, 2019 թվականին՝ 1,0%-ով: 2019 թվականին արդյունաբերական արտադրության կրճատման գործում ամենամեծ ներդրումն ունեցել են այնպիսի երկրներ, ինչպիսիք են Գերմանիան (-4,7%), Լյուքսեմբուրգը (-3,0%), Ռումինիան (-3,2%), Պորտուգալիան (-2,4%): Սակայն արդյունաբերական արտադրության աճի տեմպերի նվազումը բնորոշ էր ոչ բոլոր երկրներին: Օրինակ՝ Դանիայում այդ ցուցանիշն աճել է 2,7%-ով, Լիտվայում՝ 3,5%-ով, Հունգարիայում՝ 5,4%-ով, Լեհաստանում՝ -4,4%-ով, Սլովենիայում՝ -3,0%-ով¹¹:

2016–2019 թվականներին ավտոմեքենաների, կցորդների և այլ տրանսպորտային տեխնիկայի արտադրության աճի տեմպերը պահպանել են տատանումների բարձր առատություն՝ 2016 թվականի ապրիլին հասնելով տվյալ ժամանակահատվածի համար առավելագույն մակարդակի, երբ աճի տեմպը տարեկան արտահայտությամբ կազմել է 10,6%: 2018 թվականի երկրորդ կեսից սկսած՝ զգալիորեն կրճատվել է այդ կատեգորիայի ապրանքների ար-

¹⁰ Տե՛ս EUROSTAT DATABASE - <https://ec.europa.eu/eurostat/web/main/data/database>

¹¹ Տե՛ս նույն տեղը:

տադրությունը. 2019-ին բացասական դինամիկան պահպանվել է՝ 2019 թ. ապրիլին նվազման տեմպը հասել է 2016–2019 թթ. առավելագույն արժեքին (-8,2%): 2019 թ. արտադրությունը նվազել է 7,7%-ով¹²:

Բերված տվյալների վերլուծությունից կարելի է փաստել, որ Եվրամիությունում տնտեսական անկման լուրջ նախադրյալներ էին ձևավորվել դեռևս նախահամավարակային ժամանակաշրջանում, և մի փոքր տնտեսական ցնցումն իսկ բավական էր երկրներում «վայրիվերումներ» առաջացնելու համար:

Համավարակի բռնկման ժամանակահատվածում ԵՄ հիմնական մակրոտնտեսական եռամսյակային ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 1-ում: Բերված տվյալները փաստում են, որ 2020 թվականի 2-րդ եռամսյակից մինչև 2021 թվականի 2-րդ եռամսյակն ընկած ժամանակահատվածում բացասական միտումներ արձանագրվել են ներկայացված գրեթե բոլոր մակրոտնտեսական ցուցանիշների մասով: Մասնավորապես՝ ՀՆԱ ծավալը նախորդ եռամսյակի համեմատությամբ առավել կտրուկ՝ -11,3%-ով անկում է ապրել 2020 թվականի 2-րդ եռամսյակում, որին հաջորդել են վերականգնման (11,8% աճ), ապա չափավոր անկման միտումները (-0,2% և -0,1% անկում 2021 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակներում):

Աղյուսակ 1

ԵՄ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները համավարակի բռնկման ժամանակահատվածում (եռամսյակային կորվածքով)¹³

Ցուցանիշներ (փոփոխությունը նախորդ եռամսյակի նկատմամբ, %)	Եռամսյակներ				
	2020-Q2	2020-Q3	2020-Q4	2021-Q1	2021-Q2
ՀՆԱ (ծավալ)	-11,3	11,8	-0,2	-0,1	2,1
Մասնավոր վերջնական սպառում (ծավալ)	-12,3	13,6	-2,8	-1,7	3,5
Ներդրումներ (ծավալ)	-17,7	12,1	2,5	0,3	1,0
Զբաղվածություն	-2,8	0,9	0,5	-0,2	0,7
Կառավարության համախառն պարտք (%)	87,5	89,6	90,5	92,9	...

2020 թվականի 2-րդ եռամսյակում են դիտվել նաև նախորդող եռամսյակի նկատմամբ մասնավոր վերջնական սպառման ծավալների, ներդրումների և զբաղվածության մակարդակի առավել շոշափելի անկման միտումներ: Թեև 2021 թվականի 2-րդ եռամսյակից մակրոտնտեսական ցուցանիշների բարելավմամբ նկատելի են դարձել ԵՄ տնտեսության վերականգնման միտումները, այդուհանդերձ, տնտեսության լիարժեք վերականգնման մասին խոսելը դեռևս վաղ է՝ հաշվի առնելով համավարակի բռնկման ահագնացող տեմպերը նույնիսկ պատվաստման գործընթացի լայնածավալ իրականացման պայմաններում:

¹² Տե՛ս նույն տեղը:

¹³ EUROSTAT, Eurostatistics: Data for Short-term Economic Analysis, Statistical books, 09/2021 edition, Luxembourg, ISSN 1831-3221
<https://ec.europa.eu/eurostat/documents/3217494/13414520/KS-BJ-21-009-EN-N.pdf/98a21905-fabc-e9ec-fe58-b6eaa8289255?t=1631549186289> , p. 26


Ճգնաժամի բացասական հետևանքները նվազագույնի հասցնելու, բնակչության կյանքի և եկամուտների պաշտպանության համար ձեռնարկվել է ավելի քան 1350 միջոց: ԵՄ կարիքավոր երկրներին ուղղակի ֆինանսական աջակցություն ցուցաբերելու նպատակով առավելագույնս կենտրոնացվել են Եվրամիության բյուջետային միջոցները: Հաստատվել է 2021–2027 թվականների ընդլայնված երկարաժամկետ բյուջեն, ինչպես նաև NextGenerationEU վերականգնման ժամանակավոր հիմնադրամի բյուջեն՝ 750 մլրդ եվրո ծավալով: Ընդհանուր առմամբ, դրանք կազմում են խթանող միջոցների խոշորագույն փաթեթը, որը երբևէ ֆինանսավորվել է ԵՄ բյուջեի միջոցով՝ 1,8 տրլն եվրո:

Թեև ԵՄ տնտեսությունն աստիճանաբար վերականգնվում է, սակայն առկա են զգալի տարբերություններ ինչպես անդամ առանձին երկրների, այնպես էլ ոլորտների կատարողականների միջև: Այսպես՝ թվային արդյունաբերության գերակշիռ մասը, ինչպես նաև առողջապահության ոլորտը վերականգնման հաջող տեմպեր են ցուցաբերել: Տնտեսություն խթանող այնպիսի արդյունաբերական բնագավառներում, ինչպիսիք են՝ քիմիական, շինարարական, սննդամթերքի ու խմիչքների ոլորտները, ամենայն հավանականությամբ, կդիտվի ճգնաժամից V-աձև վերականգնում: Չնայած նախնական ցնցումներին, ավտոմոբիլային և տեքստիլ արդյունաբերությունները, կարծես, գտնվում են վերականգնման ուղու վրա: Մարդկային շփումից և փոխազդեցությունից մեծապես կախված ոլորտները, ինչպիսիք են մշակութային և ստեղծագործական արդյունաբերությունը և օդատիեզերական արդյունաբերությունը (չարժունության և զբոսաշրջության նվազման պատճառով), ճգնաժամի հետևանքով զգալի հարվածներ են կրել, և, ամենայն հավանականությամբ, դեռ երկար ժամանակ կորուստներ կկրեն այս աննախադեպ ցնցումներից¹⁴:

Գծապատկեր 1-ում ներկայացված է ԵՄ անդամ երկրներում իրական համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) աճը 2021 թվականի երկրորդ եռամսյակում՝ նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատությամբ: ԵՄ ընդհանուր ՀՆԱ-ն 2021 թվականի երկրորդ եռամսյակում կազմել է մոտ 13,31 տրլն եվրո: Բացառությամբ մի քանի երկրի (Ավստրիա, Հունաստան, Մալթա, Խորվաթիա)՝ ԵՄ երկրներում, ինչպես և Եվրոյի գոտում 2021 թվականի երկրորդ եռամսյակում դիտվել են ՀՆԱ շոշափելի, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ երկնիշ աճի միտումներ: Սակայն դա դեռևս բավարար չէ նախահամավարակային ճգնաժամի մակարդակի վերականգնման համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համավարակը դեռևս ակտիվ շրջանում է, ԵՄ, ինչպես և աշխարհի մնացած երկրները ստիպված են համավարակի տարածման դեմ պայքարի միջոցառումները համադրել տնտեսության վերականգնման ակտիվ քաղաքականության հետ: Այս առումով խիստ կարևոր է տնտեսական սահմանափակումներից խուսափելը: Տնտեսության վերականգնման տեսանկյունից սոցիալական աջակցության ծրագրերի փոխարեն, թերևս, առավել նպատակային կարող է լինել տնտեսական ակտիվության խթանմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանն ուղղված պետական աջակցությունը:

¹⁴ Տե՛ս De Vet J.M et al, նշվ. աշխ.:



Գծապատկեր 1. ՀՆԱ աճը ԵՄ երկրներում 2021 թ. 2-րդ եռամսյակում՝ նախորդ քարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ (%)¹⁵

¹⁵ Statista, GDP growth in EU countries compared to same quarter previous year 2nd quarter 2021, Aug 25, 2021, <https://www.statista.com/statistics/263008/gdp-growth-in-eu-countries-compared-to-same-quarter-previous-year/>

Եզրակացություններ: Ճգնաժամերը տնտեսական հարաբերություններում երկակի բնույթ ունեն. մի կողմից՝ դրանք առաջացնում են այնպիսի բացասական երևույթներ, ինչպիսիք են համաշխարհային ՀՆԱ, միջազգային առևտրի ծավալների կրճատումը, ֆոնդային ու ֆինանսական շուկաների անկայունությունը, տարբեր երկրների տնտեսությունների մրցունակության անկումը, զանգվածային գործազրկությունը, կենսամակարդակի անկումը, մյուս կողմից՝ ճգնաժամերը հնարավորություն են ընձեռում բացահայտելու տնտեսական համակարգում առկա թերությունները, շտկելու դրանք, իսկ ճգնաժամը վերապրած կազմակերպություններն էլ արդյունքում դառնում են առավել կենսունակ և կարողանում են արագ հարմարվել արտաքին միջավայրում տեղի ունեցող փոփոխություններին:

COVID-19 համավարակով պայմանավորված ճգնաժամը համակել է ամբողջ աշխարհը: Եվրամիությունը ևս բացառություն չի կազմում: ԵՄ-ում համավարակի բռնկուն շրջանը 2020 թվականի 2-րդ եռամսյակն էր, որի ընթացքում, հարկադիր տնտեսական սահմանափակումներով պայմանավորված, նախորդ եռամսյակի համեմատությամբ կտրուկ անկում գրանցվեց ԵՄ գրեթե բոլոր հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների գծով. ՀՆԱ ծավալը կրճատվեց 11,6%-ով, մասնավոր վերջնական սպառման ծավալը նախորդ եռամսյակի նկատմամբ արձանագրեց 12,3% անկում, ներդրումների ծավալը կրճատվեց 17,7%-ով, իսկ զբաղվածությունը՝ 2,8%-ով: Թեև արդարության համար պետք է արձանագրել, որ նույնիսկ համավարակի բռնկումից առաջ ԵՄ երկրների տնտեսություններում արդեն իսկ առկա էին մոտալուտ ճգնաժամի սպառնալիքի ազդակներ:

2021 թվականի երկրորդ կիսամյակից ԵՄ տնտեսությունը, կարծես թե, հետևողականորեն սկսել է վերականգնվել, թեև ինչպես անկման, այնպես էլ վերականգնողական աճի միտումներն էապես տարբերվում են ըստ առանձին ոլորտների: Բնականաբար, առավել արագ վերականգնվում են հատկապես թվայնացման բարձր մակարդակ ապահոված ոլորտները, որոնք շոշափելի կորուստներ չեն կրել կամ նույնիսկ շահել են համավարակի և տնտեսական սահմանափակումների պայմաններում:

ԵՄ տնտեսության վերականգնմանը կարող են նպաստել պետության միջամտությամբ տնտեսության ակտիվության խթանումը և նոր աշխատատեղերի ստեղծումը՝ բնակչության սոցիալական աջակցությանն ուղղված միջոցառումների ֆինանսավորման փոխարեն: Միաժամանակ, չափազանց կարևոր է տնտեսական սահմանափակումներին վերադառնալուց ամեն գնով խուսափելը:

Օգտագործված գրականություն

1. Թադևոսյան Ռ., Կորոնավիրուսը խարխլել է Եվրամիության միասնականությունը, «Ամբերդ» տեղեկագիր, 1(2), 2020, Եր., «Տնտեսագետ» հրատ., <https://asue.am/upload/files/amberd/Ambard%202020.1.pdf>
2. Կարապետյան Ն., Ինչպե՞ս հակազդել կորոնավիրուսով պայմանավորված տնտեսական շոկին, մարտ, 2020,

- https://asue.am/amberd/publications/analytics/how-to-deal-with-the-economic-shock-caused-by-coronavirus-1?fbclid=IwAR30_xWueeO1TMkIiaHTdo4qEgYdi-xSys39er-A-hf22WKoysq0lpt33xM
3. Неравномерность развития стран Евросоюза в 2000-х годах // Бюллетень о текущих тенденциях мировой экономики, выпуск № 26, ноябрь 2017 г. // URL, <https://ac.gov.ru/archive/files/publication/a/15555.pdf>
 4. ООН, Мировая экономика после пандемии: ООН призывает к глобальной консолидации, 25 января 2021, <https://news.un.org/ru/story/2021/01/1395082>
 5. De Vet J.M et al. Impacts of the COVID19 pandemic on EU industries, Publication for the committee on Industry, Research and Energy, Policy Department for Economic, Scientific and Quality of Life Policies, European Parliament, Luxembourg, 2021.
 6. Eurostat // URL: https://appsso.eurostat.ec.europa.eu/nui/show.do?dataset=une_rt_a&lang=en
 7. EUROSTAT DATABASE - <https://ec.europa.eu/eurostat/web/main/data/database>
 8. EUROSTAT, Eurostatistics: Data for Short-term Economic Analysis, Statistical books, 09/2021 edition, Luxemburg, ISSN 1831-3221 <https://ec.europa.eu/eurostat/documents/3217494/13414520/KS-BJ-21-009-EN-N.pdf/98a21905-fabc-e9ec-fe58-b6eaa8289255?t=1631549186289>
 9. Eurostat, Real GDP growth rate – volume, TEC00115, 22/10/2021 / URL: <https://ec.europa.eu/eurostat/databrowser/view/tec00115/default/table?lang=en>
 10. IISS, The European Union in the COVID-19 storm: economic, political and stability challenges, 19 February 2021, <https://www.iiss.org/blogs/research-paper/2021/02/eu-covid-19-economic-political-stability-challenges>
 11. Statista, European Union: share in global gross domestic product based on purchasing-power-parity from 2016 to 2026 / <https://www.statista.com/statistics/253512/share-of-the-eu-in-the-inflation-adjusted-global-gross-domestic-product/>
 12. Statista, GDP growth in EU countries compared to same quarter previous year 2nd quarter 2021, Aug 25, 2021, <https://www.statista.com/statistics/263008/gdp-growth-in-eu-countries-compared-to-same-quarter-previous-year/>

АНУШ АНАНЯН

Доцент кафедры международных экономических отношений АГЭУ,
кандидат экономических наук

Экономический кризис ЕС в условиях распространения коронавируса. – В условиях современного экономического развития практически ни одна страна мира не застрахована от кризисных явлений, которые время от времени происходят в разных государствах и имеют свои уникальные первопричины. История развития экономических отношений показывает, что кризисы являются неотъемлемой частью развития социально-экономических систем. Повторяющиеся циклы экономического роста и спада возникают в любом типе социально-экономических систем, независимо от их особенностей и характера управления.

Кризис COVID-19 серьезно сказался на экономике 27 стран-членов ЕС, вызвав беспрецедентные потрясения в Европе и во всем мире. Поскольку глобальная пандемия все еще продолжается, и ее вторая (возможно, даже третья) волна держит Европу и весь мир в плену, слишком рано оценивать последствия этого кризиса. Однако первичные последствия уже ощутимы.

Пандемия коронавируса привела к худшему экономическому коллапсу в Европе за последние десятилетия, хотя к 2021 году тенденции к восстановлению уже очевидны.

Ключевые слова: экономика ЕС, кризис, рецессия, коронавирус, пандемия.

JEL: F00, G01

DOI: 10.52174/1829-0280_2021_4_171

ANUSH ANANYAN

Associate Professor of the Chair of International Economic Relations of ASUE,
PhD in Economics

Economic Crisis of the EU Under the Spread of Coronavirus. – In the context of modern economic development, practically no country is guaranteed against the crisis phenomena that occur from time to time in different countries and have their own unique root causes. The history of the development of economic relations shows that crises are an integral part of the development of socio-economic systems. Recurring situations of economic growth and decline occur in any type of socio-economic systems, regardless of their characteristics and the nature of management.

The COVID-19 crisis has severely affected the economies of the 27 EU member states, causing unprecedented turmoil in Europe and around the world. Since the global pandemic is still

going on - its second (perhaps even third) wave still holds Europe and the world in its clutches, it is too early to assess the overall consequences of this crisis. However, the main effects are already being felt.

The coronavirus pandemic has led to the worst economic collapse in Europe in decades, although recovery trends are already clear by 2021.

Keywords: *EU economy, crisis, recession, coronavirus, pandemic.*

JEL: F00, G01

DOI: 10.52174/1829-0280_2021_4_171